

ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ 63-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Այսօր «Յիշատակ է քիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմի»:

Ապրիլյան եղեռնի 63-րդ տարելիցն է:

Հայ ժողովրդի դարավոր պատմության ամենատոպ ու ողբերգական թվականն է 1915-ի ապրիլը:

«Անավոր բան մը այնտեղ, կկատարվի
մութին մեջ,
Կապաննեն Ազգ մը այնտեղ որ կյանք
ուներ և շնորհ»:

(Վ. Թեքեյան)

Այս տարի էլ, ապրիլի 24-ին, երկուշաբթի օրը, Մայր Աթոռում, հայրենիքում և սփյուռքի ողջ տարածքի վրա համայն հայությունը նշեց հայ տառապանքի և մեր հավաքական նահատակության 63-րդ տարելիցը և հպարտորեն իր գլուխը խոնարհեց մեր նահատակների անմոռաց հիշատակի առաջ, նահատակներ, որոնք ընկան «վասն Յիսուսի, վասն հայրենեաց», ընկան, որ հայությունն ապրի և դարերի դիմաց վառի իր հավերժության բոցավառ խարույկը.

Անցան 63 տարիներ: Հայության վիշտը, նահատակությունը վերածվեց գոյատևման ուժի, կյանքի, ստեղծագործական կամքի, հաղթանակի, ապրելու և հավերժելու հավատքի:

Ժողովուրդների կյանքում անդարձ կորած բոպեն ետ չես դարձնի ափսոսանքով և հուսահատությամբ: Ողջերը չեն ապրի, եթե «մեռնի երազը նահատակների»:

Մեր այսօրվա հաղթական երթի մեջ կա երազն ու շունչը մեր նահատակների: Մեր այսօրվա պայծառ ու խոստումնալից հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, հավիտենական հուշարձանն է մեր նահատակների անմահ հիշատակի:

1978, ապրիլի 24...

Ժամը 11-ն է: Վեհափառ Հայրապետը բարձրանում է Ծիծեռնակաբերդ, Նահատակաց հուշարձանին խաչազարդ ծաղկեպսակ դնում՝ հետևյալ մակագրությամբ. «Օրհնություն մեր նահատակներին Մայր Աթոռ ս. Էջմիածնից»:

Հայոց Հայրապետը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պարոն Անդրանիկ Հասրաթյանը, Մայր Աթոռի ողջ միաբանությունը, մայրավանքի դեկավար պաշտոնեությունը շուրջանակի բոլորվում են նահատակաց հուշարձանի հավերժական կրակի շուրջ և ծաղիկներ զետեղում:

Աղոթքի և **Ուխտի** սրբազան պահն է: Հայոց Հայրապետը «Հոգւոց» է արտասա-

նում նահատակաց հիշատակին, և մեկ բոպե լռությամբ բոլոր գլուխները խոնարհվում են...

Ժամը 12-ն է: Մայր տաճարում, Նահատակաց սուրբ սեղանի վրա, պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը և իր բովանդակալից քարոզով ոգեկոչում հիշատակը նահատակների:

Ս. պատարագին ներկա է Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբանության անդամներով, մայրավանքի ողջ աշխատավորությամբ և հավատացյալների հոծ բազմությամբ:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը, ի գլուխ եկեղեցական թափորի, առաջնորդվում է մայրավանքի հյուսիսային կողմում կառուցված **Ուխտի** և **Աղոթքի** նահատակաց հուշարձան ու նախագահում հոգեհանգստյան արարողությանը:

Հայոց Հայրապետը «Հոգւոց» է արտասանում: Բոլոր ներկաները լռությամբ, երախտապարտ հիշողության լույսով հարգում են Ապրիլյան եղեռնի նահատակաց հիշատակը:

Ժամը 15-ին հոգևոր ճեմարանի ուսանողությունը ծաղիկներով, բազմահազար ժողովրդի հետ բարձրանում է Ծիծեռնակաբերդ: Ժամը 19-ն է: Ողջ Հանրապետության մեջ հայտարարվում է **լռության բոպե:** Հայրենաբնակ բովանդակ հայությունը մեկ սիրտ ու մեկ հոգի, կրկին անգամ հպարտ լռությամբ իր հարգանքն է մատուցում Ապրիլյան նահատակների հիշատակին:

Փա՜ռք և հարգա՜նք քեզ, երեկ նահատակված, բայց այսօր հրաշափառապես ազգային վերածննդյան և ապահովության փրկարար ճանապարհը գտած Հայոց աշխարհ և հայոց ժողովուրդ: